



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱՇՃԵԱՆ ՔՐԱՏԱՆ

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԻՒՆ

Ա. Շխարհ գորանց մըն է
ու մարդիկ գինուորհեր:

Գ.

Գ Ր Ե Յ

ԳԷՈՐԳ Ծ. Վ. ԱՐՍԼԱՆԵԱՆ

(ԱՌՍՋՆՈՐԴ ՌՈՏՈՍԴՈՅԻ)



ԳԻՆ 20 ՓԱՐԱ

Զինուորհերու ձրի

Կ. ԳՈՒԻՍ

ԳՐԱՏՈՒՆ Յ. Վ. ԱՇՃԵԱՆ

1912


Handwritten signature and scribbles in the bottom right corner.

ՀԱՅ ԶԻՆՈՒՈՐԻՆ



Առաձը կ'ըսէ . վարժութիւնն երկրորդ բնաւորութիւն կը
աշառնայ : Ուրախ ենք որ այդ վարժութիւնը՝ Հայուն կրկին
պիտի շնորհէ այն երկրորդ բնաւորութիւնը , որը շատոնցէն
ունէր ու պահ մը ընդհատուած էր . սա ալ շատ ուղիղ է թէ
քիչ առաջներն այնչափ կը խրտչէինք այդ բառէն (զինուոր) .
բնական է որ բառն ինքնին յանցանք մը չունէր . այլ աւելի՛
վարող պետը , գլուխը , կամ պետեր ու գլուխներ երբ զին-
ուորները չէին պահեր ու առաջնորդեր բուն իրենց դերին ,
պաշտօնին (ծառայութեան) մէջ : Մեր մէջ ընդհանրապէս այն
աչքերով կը դիտուէր կամ կ'ըմբռնուէր զինուորը ու զինուո-
րականութիւնը , իբր միշտ դժոխային ծրագիրներու ու հրա-
մաններու գործադրողը լի՛կ . մինչդեռ ան նուիրական պար-
տաւորութիւն կատարողի ծառայութեանը մէջ , կուրծքը հայ-
րենիքի թշնամիի առջեւ բացող , արիւնը թափող , մարմինը
նուիրող զինուորը և ոչ թէ իր տունը միամիտ ու յուսամիտ
նստողը , իր դաշտին մէջ վարողն ու հերկողը , իր կրպակին
մէջ առաւօտէն զերեկոյ արուեստով պարապողը , հալածելու ,
անոնց դէմ ճակատելու , անոնց չունեցած ոյժին դէմ կռուե-
լու զինուորը , ուսկէց կը ծնէր ու կը ծնի , ուսկէց կը տա-
րածուէր ու կը տարածուի հուրը , սուրը , արիւնն ու աւերը
ուսկէց կը դրոշմուէր ու կը դրոշմուի ճակատներու՝ կեանքի ,
շիրքի , պաշտօնի , աստիճանի ու նուիրականութեան մը նսե-
մացում , ստորնացում , ու կը բացուէր ու կը բացուի նաև
ահագին խրամատ , անջրպետ մը , որուն փակման և կամ
կրկին միացմանը պէտքերուն երկար տարիներ , բազում ջան-

9474 9. 14



քեր ու աշխատութիւններ պէտք կ'ըլլան, ու սրչափ մեծ, անհամեմատ քանակութիւններով, ոյժերու ու հարստութեան պէտքով: Հիմակ որչափ կը տեսնենք ու այնպէս ալ կը հաւատանք թէ՛ զինուորին երկաթ բազուկը մինակ հայրենիքի մեծութեան ու անկախութեան ոտնձգութիւն ընող թըշնամիին համար պիտի պնդանայ. թէ զինուորի կրանիթ կուրծքը միայն հայրենիքի պարարտ, արգասաբեր հողամասի մը աչք տնկող անկուշտ ագահին դէմ պիտի բերդանայ. թէ զինուորի յաղթ, հսկայ կոնակը միայն հայրենի հողէն ներս քայլ մը առնող, և կամ Անոր փառաւոր դրօշը ծակծկողին դէմ պիտի ժայռանայ. թէ զինուորը հայրենի հողին վրայ լռիկ միջիկ աշխատողը, իրարու դրկից ու պատկից եղող, նոյն դրօշին ու Պետութեան տակ ծառայող ո՛ր և իցէ անհատը պիտի պաշտպանէ ու հովանաւորէ, անոր տան սրբութիւնն իրը համարելով, անոր պատիւը իրը, անոր կայքն ու գոյքը միշտ իրը համարելով ու այդ սրբութեան, պատիւին, ու հարստութեան համար կեանքն ի սպաս դնելով. այս է հասկցում, պարտաւորում ու փնտռում զինուորութիւնը, ու ինչո՞ւ ամէն Օսմանցի այս զինուորութիւնը չցանկայ, ինչո՞ւ ամէն Օսմանցի այս պարտաւորութիւններով չփութայ զինուորութեան, և առանց առարկութեան: Հակառակէն հասկցում, ու խորական ոգւով պարտաւորում զինուորութիւնը, հայրենիքի ոչ թէ փառքին, այլ նսեմացումին, ո՛չ թէ պահպանումին, այլ կորուստին, ո՛չ թէ շինութեանը, այլ քայքայումին պատճառ կ'ըլլայ: Ո՛ւր էր թէ մարդեր ու պետութիւններ՝ ընչաքաղց, անյագուրդ բնաւորութիւններէ հեռի մնային, ու այդ բարքը սրբագրէին, ու այն ատեն դադրէր զինուորութիւնը հաւասարապէս. սրչափ յառաջ պիտի երթար, սրչափ պիտի յաջողէին ու քանի՛ պիտի ծաղկէր երկրագործութիւն, արուեստ հարստութիւն ու ճոխութիւններ, ու պիտի դադրէր ամէնէն աւելի սպաննելու, իրարու երկիր աւրելու, տուներ քանդելու, շէն քաղաքներ ու գիւղեր դժոխք դարձնելու տենչը: Ու երբ

դեռ մարդուն մէջ համեղբայրութեան գաղափարը չէ ունեցած իր հաստատ կռուանը, ու դեռ կրօններու քարոզած սիրոյ վարդապետութիւնը միայն յատկացուած շէնքերու մէջ տիրելու ու վաղանցիկ կերպով տպաւորելու գորութեանը մէջ է, շատ հեռի ենք բուն եղբայրութեան վարդապետութենէն ու տիրապետութենէն, ու ընդհակառակն շատ աւելի ու շատ լաւ կը կատարելագործուին այն գործիքները, այն առարկաները, որոնք մարդուս կեանքը վտանգելու ու փճացնելու կը ծառայեն, իսկ շինութեանը համար ո՛չ. ու քանի՛ հեռի ենք այդ օրհնեալ թուականէն ու միլիոնաւոր փարսախներով: Եւ երբ այսպէս՝ գէթ ներքին վարչութեան ու կառավարութեան մէջ ի՞նչ ձեւի տակ ու ինչ եղանակի ներքեւ ալ ըլլայ ու գտնուի, զինուորի ոյժը պէտք է ծառայէ մարդուն, ընկերութեան ու համաբնակչութեան շահերուն: Օսմանցիութեան ներքին կեանքը քայքայման, փճացման չենթարկուելու համար, ա՛յլ բոլորէն հասած է, ժամը սպառած, ու որոշ գիտնալ պէտք է ու ամէն ճշմարիտ Օսմանցի անհաաի պարտքն է թէ բացարձակ ճշմարտութիւնը և թէ անպայման ուղղութիւնը խօսքի, գործի, զինուորութեան ու զինուորականութեան մէջ, միայն ու միայն ըլլալու է նոյն այն ուղղութիւնն ու ճշմարտութիւնը, և որով կարելի է քայլել ու քայլեցնել անմոլոր ու անխոտոր. ու մանաւանդ երբ երկրի մը մէջ այլազան տարրեր կան որչափ աւելի ուղիղ, ճշմարիտ, անկեղծ, հաւատարիմ, անկողմնակալ, անաչառ, բացարձակ հաւասարութիւնն յարգող, սիրող և միայն անոր ծառայող, վարուողութիւն ու վարչութիւն պէտք է, ու այս է որ պիտի առաջնորդէ նաւահանգիստ: Ո՛ր վարչութիւնը ըլլայ թող ըլլայ, իր յարկաբաժնին վրայ պէտք է ցուցակագրէ Արդարութիւն, Ճշմարտութիւն ու Հաւասարութիւն, և ասոնք անպայմանօրէն ու բացարձակօրէն. ասկեց անդին տարրեր քայլեր, անօրինակ միջոցներ, սեւեռեալ մտածումներ, անիրականալի խորհուրդներ. տհաս ու անմարս նպատակներ, անգործադրելի գործունէութիւններ Չարեն են,

այո՛ , միշտ Չարէն : Օսմ . զինուորական վարչութիւնը զիտէ
թէ օսմանցի զինուորին տոկունութիւնը , քաջութիւնը համ-
բաւեալ էր . այդ համբաւը դարձնել պէտք է , ու պետեր և
վարիչներ այդ ուղղութեամբ քայելու են . նախ պետեր իրենց
բուն պարտականութեան բարձրութեան վրայ մնալու են . հա-
մոզեն , խրատեն , սովրեցնեն հայրաբար , առաջնորդեն տիրա-
բար , սիրեն եղբայրաբար , և առիւծաբար՝ թշնամիին դէմ :
Հայ զինուոր , ահա դուն ալ իբր Օսմանցի անհատ այդ նուխ-
րական պարտականութեան ուղիին մէջ ծառայելու կանչուած
ես և որո՛ւ , հայրենիքին , բաղձալի , սխրալի հայրենիքին . . .
Ի՛նչ մեծ բախտաւորութիւն քեզի , երբ դուն զրկուած էր այդ
պարտականութենէն , որ ըսել է զրկուած էիր քաղաքացիա-
կան կարգ մը իրաւունքներէ , ու այդ զրկումը ստրկութեան
կամ գերութեան մէկ տեսակը չէ՞ր . տեսակ մը անվստահու-
թիւն չէ՞ր , որ նետուած էր ճակտիդ երբ քեզի իրաւունք տրը-
ուած չէր ծառայելու այն հայրենիքին որ քուկդ ալ էր , է և
պիտի մնայ . ինչպէս ամէն Օսմանցի . դուն երբ՝ անոր հողէն
ծնած , օդովն ու ջրովը սնած ու մեծցած էիր , ատոր հանդէպ
չունէիր այն երախտագիտութիւնը կամ այնչա՛փ ապերախտ էիր
և կամ թոյլ ու երկչո՛տ . ո՛չ ո՛չ , ամէն ոք կը վկայէ , ինչպէս
պատմութիւնները թէ դուն դեռ կը կրես քու նախնիքներուն
արիւննու ան կը պճլտայ , կ'եռայ , կ'եփի անխօսուկ բայց ան-
մեռուկ , և նոյն դիւցազանց արիւններէն , որոնք պահերու ու
օրերու , տարիներու ու դարերու մէջ երկիրնին (հայրենիքնիս)
պանծացուցին ու երկիրներ սարսեցին , գահերու հետ ճակա-
տեցան , ռազմավարներ դողացուցին , սպայակոյտեր հիացու-
ցին , հարիւրներով հազարներ , ու հազարներով բիւրաւորնե-
րու դէմ կռուեցան , յաղթեցին ու յաղթուեցան , ու անոնք ,
որչափ իրենց երկրի ու գահի , նոյնչափ ալ իրենց տիրապե-
տողներու անուան ու փառքին համար նոյն քաջութիւնով
կորովով ու հաւատարմութիւնով , անոնք ռազմիկ , անվախ ու
անահ մարտնչող ու կռիւին մէջ նետուող էին , մարտեան

գնդերը արտեցնող, անոնք միշտ հաւատարիմ զինուորներ էին
ու զինուորական, ու այդ ոգին շատ հին օրերու մէջ ալ, մինչեւ
Սաքանագեան գնդերն ալ ու տակաւին անկէց ալ հին,
անշուշտ այդ Արիւնն ու Անոււնը, ցեղն ու կրօնը, ժամն ու
հաւատը, նկարագիրն ու եռանդը, տոհմայնութիւնն ու հա-
ւատարմութիւնը պիտի ապրին դարերու մէջ ու պիտի ապրե-
ցուցուին: Մեծ հաւատք ունինք թէ՛ Հայ Օսմանցի զինուորը
նոյն հաւատարմութեան, չարքաշութեան, քաջութեան, մե-
ծութեան, բարձրութեան ու պարտաւորութեան մէջ պիտի
փայլի այնպէս ինչպէս իր նախնիք ու աղբրաւիք այս ու այն
պետութեան զինուորական ծառայութեանց մէջ: Հայ Օսմանցի
զինուոր դուն անտրտունջ քալելու ես պարտքիդ ուղիին մէջ,
այլապէս մտածումներ քեզ պէտք չէ խաթարեն, թուլացնեն,
ու վհատեցնեն. դուն պէտք է հաւատարիմ գանուխ նուիրա-
կան պարտականութեան մը առջեւ: ու պարտաւորութեան
մը մէջ: Կաւ ուսնիր, ամենափոքր գործէն ամենամե-
ծին մէջ հաւատարմութիւն ու աշխատութիւն կը փնտռուի,
ինչպէս Ս. Գիրքն ալ կ'ըսէ. «Ով որ քիչին հաւատա-
րիմ է շատին ալ հաւատարիմ է»: Դուն պարտաւոր ես
հնազանդիլ ամէն մի հրամանի, ու հպատակիլ բոլոր օրէնք-
ներու. հնազանդիլը ստրկանալ չէ, հպատակիլն ալ գերութիւն
չէ, և բնաւ. կարգապահութիւն և օրինաւորութիւն այդ կը
պահանջեն, ուրտեղ օրէնք և օրէնքի գործադրութիւն չկայ,
հոն կանոնաւոր գործ ու յառաջդիմութիւն չկայ, ուր հնա-
զանդութիւն, հպատակիլ չկայ, հոն օր մը հրամայելու կամ
լաւ արդիւնք մը մէջտեղ բերելու հաւանականութիւնն երբեք
չկայ: Քու նախնեացդ սրբազան այն ոգիները, զինուորին ու
զինուորականութեան, թող քեզի հրահրեն, քաջալերեն, ուժե-
ղացնեն և դուն այդպէս զօրացած քու նուիրական, բազմիցս
ստիպողական պարտքերուդ մէջ չթերանաս և ցեղիդ համայն-
քիդ հայրենիքիդ անոււնը բարձրացնես:

Մի խրատչի՛ր զինուոր բառէն, մի քաշուի՛ր զինուորական

ծառայութենէն, և երբե՛ք մի՛ սոսկար պատերազմի ուրուա-
նկարներէն: Ի՞նչ է կեանքը, եթէ ոչ սկիզբի օրէն ցվախճան
նոյն զինուորութիւնը, տանը թէ դաշտին, կրպակին թէ վա-
ճառատան, արհեստանոցին թէ գործարանին մէջ: Արեգակին
տակ հանգիստ, երկինքի տակ անաշխատ վայելք չկայ. միայն
բառէ՛ն է որ պիտի այլայլիս. այո՛, նոյն զինուորն էիր քու
մարդկային, ընկերային ու ազգային պարտականութեանցդ
մէջ. և հիմակ որ զինուորական վերարկուն հագած ես՝ կը
կարծես տարբեր դիրքի ու աշխատութեան մը կանչուած ես.
չէ՛ նոյնն է երբ որ ձգես ալ որոշուած օրին. լաւ գիտցի՛ր,
երբ պարտք մը կը կատարես՝ անոր ուրիշ մ'է որ կը յաջորդէ,
ու կեանքը պարտքերէ շինուած շղթայ մ'է:

Աշխարհի մէջ ո՞վքեր են յաջողուածները: Անվեհերները,
աներկիւղ աշխատողները, յոյսով գնացողները, առողջ և
ուղիղ մտածողները ու հաւատարիմ գործողները, սիրով ու
սրտով պարտականութեան ու ծառայութեան մէջ նետուողները.
ու մինչև անմահները. եւ ատոնք ո՞վքեր են, անոնք որ
կեանքը ուսումնասիրած, սերտած, ըմբռնած ու մանաւանդ
այդ կեանքը արժեցնելու գիտութեան տեղեակ են եղած ու
յարգած բոլոր ատոր պայմանները: Այո՛ զինուորութիւնը բուն
իր դերին ու ծառայութեան մէջ դեռ ժամանակներու համար
պարտաւորիչ, ու արժեցնելու մէջ փառքի ու պարծանքի բա-
ժինը ունի, և դարերու մէջ ապրելու համար բացարձակ զո-
հողութիւն ու անխարդախ անձնուիրութիւններու կը կարօտի.
ապրեցէ՛ք այդ կեանքը, ծառայեցէ՛ք այդ պաշտօնին: Այո՛
իրաւ թէ շատ դիւրին կեանք չէ և ոչ ալ հեշտ ու դժուար է այդ
կեանքի չվարժուողներուն, ու առաջին կոչին սարսափ մը կը
տիրէ, դող մը կը պատէ ու մեկնումի օրուան այն ցուրտ
պատկերացումը կը գծի ու կանչուողը անորոշութեան մը մէջ
կը թաղուի. բայց ինչո՞ւ և ի՞նչ ձայն այնչափ զօրաւոր է ու
հնչեղ քան պարտականութեան ձայնը: Հայ Սամանցի զինուոր
քայլէ՛ ու քայլէ՛. այդ ևս մի՛ դպրոց է բարեկրթութեան,

հնազանդութեան, ուժեղութեան ու աներկիւղութեան, առ-
նական տոկունութեան և կորովայից պնդութեան, ու այդ
աւելի շէնք մ'է, ուր տարրեր ու այլ ցեղեր իրարու մօտիկ
պիտի եղբայրանան, մոռցուին ատով նախանձի. կոյր մոլութեան
ու մոլեռանդութեան թողնած հետքեր, որ այնչափ
վնասարեր եղան սիրելի երկրին, և կուշտ կշտի, կողք կողքի
խօսին հնչեն, մարզանքներ կատարեն և օր մըն ալ կուռին
Հայրենիքի փառքին ու մեծութեանը համար: Այս առաջին
տպաւորութեան տակ շէնք ու դէմքեր խորթ ու ընտանի չպիտի
երեւին, օրէնքներ խիստ, հրամայողներ անհամակիր, սովո-
րութիւններ սառն ու նոյն ինքն բիրտ. բայց երբ ընտելացուի,
դիւրին պիտի գայ, և արդէն անոնք են որ կը կազմեն զինուո-
րականութեան օրէնքը: Հո՛ն երբ գգուանք ու գրգանք, շո-
յանք ու փայփայանք, քնքուշ կացք ու նիստ կը բացակայի,
անոնց փոխան կը զօրանայ կամքի, կորովի ոյժը, և հեռու
կը վանեն յուլութիւն ու ծուլութիւն, անուվախ, դանդա-
ղութիւն ու տատամստութիւն, անանկ ալ մեղկ ու հեղգ
կեանք, ու կը փոխարինուի առողջ կազմ, ուժեղ իրան, եր-
կաթ բազուկ, ժայռ սիրտ, բիրտ հոգի, գեղանի դիրք, հուժ-
կու կեցուածք. ու հեռու, շատ հեռու կը մնան քաղքենի
կնանքի կարգ մը անախորժ հիւանդութիւնները, ու կը հատ-
նին, կը ջնջուին սպառող ու սպառնացող մանրէները: Այո՛,
միջոց ու ժամանակ ձեզի տրամադրելի պիտի ըլլան ինքնա-
զարգացման. ահա՛ երրորդ կամ չորրորդ դպրոցը. հո՛ն ուզա-
ծիդ չափ կարդայ, կրցածիդ չափ գրէ, ուսումնասիրէ, հմտա-
ցի՛ր քու և քու երկրիդ պատմութեանը, նոյնպէս մարդկային
ու ցեղային պատմութեանը, գիտութեանն ու կրթութեանը,
չես մոռնար նորանոր զարգացման միջոցները, կը հետաքրքր-
ուիս զինուորական, երկրագործական, արհեստական ու տըն-
տեսական գիտութեանց, կ'օգտակարիս ու կը պատրաստուիս
լաւը ընելու, լաւը ունենալու, լաւը պահելու, և յոռին, միշտ
յոռին թողելու: Մի՛ մոռնար թէ Օսմանցի ես և երբեք թէ

Հայ ես . քու ընտանեկան պարտքերդ շատ են . անոր դէմ ուխտած խոստումներդ , երդումներդ , պարտաւորութիւններդ քեզի թո՛ղ պահակներ ըլլան որ չը մոլորիս , չը գայթիս , չը խոտորիս . սա ու նա չլացումներէն , ապագայի ակնկալութիւններէն ու նոյն ինքն մեծութիւններէն ալ . գիտցիր թէ ուղիղ՝ ու հաւատարիմ և հարազատ ճամբով ու միջոցով մեծութիւններն են որ կ'արժեն և իրական են : Գիտցիր թէ ծնողքիդ երախտապարտ ըլլալու ես , ու այդ քեզ թող խոստմանդ ու ստացումիդ մէջ պահեն . գիտցի՛ր թէ քու ընտանիքիդ կէսն ես , մէկ մարմին ու մէկ կեանք . չես ազատ՝ գործածել կեանքդ ու ոյժդ այնպէս , ինչպէս որ երբեմն . ամէն ատենի համար պատասխանատու ես ու ամէն ժամանակի համար ալ պարտաւոր , ձեր երկուքին սէրն ու սիրտը սուրբ խորհուրդով պնդուած , ոչինչով պէտք է զեղծանի , չը բծաւորի , չը կիսուի ու չայլայլի . ձեզ գերեզմանը կրնայ բաժնել , ուրեմն ապահով ճահքէն քալէ , ու այն է բարոյականութեան , պատուաւորութեան և սրբութեան ճամբան :

Գիտցիր թէ զաւակներուդ հանդէպ որչա՛փ պարտքեր ունիս , միայն անոնց ծննդեան պատճառ ըլլալդ չի բաւեր , այլ բուն պարտքդ է զանոնք պէտք է եղածին պէս կրթել , խնամել , բարեկրթել , արհեստի տէր դարձնել ու մեծ տանը (ազգ) պատուաւոր ու արժանաւոր ժողանդ պատրաստել . անոնց սէրը քու սիրտիդ մէջ պէտք է կենդանի ու առողջ մնայ . քու մտածումդ անոնք պէտք է գրաւեն երբ դուն քիչ մը հանդիստ կ'ունենաս . ուրիշներու մտածումներ այլ ընդ այլոյ ձեր կեանքէն ու պատիւէն ու եսէն բաներ մը կը գողնան : Գիտցիր թէ՛ եղբայրներուդ ու քոյրերուդ հանդէպ ալ նոյն պարտքերով բեռնաւորած ես . տե՛ս ի՞նչն է որ քեզի կանչեր է այդ ծառայութեան , եթէ ո՛չ ընդհանուրին տանը եղբայրութեան ու անոր պատիւի . ինչքի ու կեանքի ապահովութեանը , ու դուն քու արիւնդ , մականունդ կրող քու հարազատդ պիտի մոռնաս . ո՛չ . և բնական է որ ո՛չ , ուրեմն քու ժամերդ յատ-

կացուր նաև քուկիններուդ համար ալ և պէտք է բարտխին ,
թրթռան , ու փրփրան : Շատ անուշ չէ՞ ընտանեկան բունին
քաղցրութիւնը , շատ վեհ չէ՞ ու խորագղեցիկ անոր սրբու-
թիւնը , շատ գորովայից չէ՞ ծնողներու խնամատարութիւնն և
խնկելի՛ անոնց պատուական և ծերի օրհնութիւնները , շատ
քաղցրայից չէ՞ ընտանիքի մը մաքուր ու տաք սիրտը . ու
սիրտն ու սէրը իրենց (ձեզի) այդ տղամարդու ոյժը չի՞ կրկնա-
պատկեր իրենց բեռները , չի՞ թեթևցներ , ծանրութիւնը չի՞
բառնար , անտանելիութիւնները տանելի չընե՞ր . շատ մեղուա-
լից չէ՞ զաւակներու անբիծ անմեղ սրտերու վերբերմունքը ,
անուշ թոթովանքը , հրեշտակային գեղգեղանքը ծնողներու
հանդէպ , ու մոռնալ ասոնք՝ մոռնալ չէ՞ բանականութիւն ,
մարդկութիւն ու հայրութիւն :

Շատ կտրօտայից չե՞ն քոյր ու եղբայր . «Ընդ աստեղօք
ի՞նչ կայ սիրուն քան զանձկայի եղբայր անուն» . ասոնց սիր-
տը չէ՞ որ կը թրթռայ իրենց նժդեհ , պանդուխտ աղբարիկին
(զինուոր) . ու անոնք ունին աղօթք ու մրմունջք շրթներուն
ու դուն ինչե՛ր ունենալու չես . . . Ո՛չ ո՛չ դուն չպիտի մոռնաս
Զինուոր որ երկնքի ու որ արեւի տակ ու շէնքի մէջ գտնուիս՝
քու կեանքդ կերտող , ձեւակերպող , ծնող ու հասունցնող գրկերն
ու ծոցերը , ձեռներն ու բազուկները , սրտերն ու հոգիները չպի-
տի մոռնաս , չպիտի օտարանաս , խորթ չպիտի դառնաս նպա-
տակով . զգացումով , մաքուր կենցաղով , պատուաւոր կեան-
քով միշտ հարազատ պիտի մնաս ու այնպէս կը հաւատանք
ու պիտի հաւատանք թէ քու միւս սրբութիւններդ ալ այնպէս
չպիտի մոռցուին քեզնէ : Քու քաղաքդ ու գիւղդ , տունդ
թէ դպրոցը , մատուռն ու եկեղեցին , խաչքարերն ու իննդրա-
կատարները , հողուրաիքն ու անդաստանները , իբրև քաղա-
քացի ու գիւղացի քեզ անուցանող այդ ծնողները , քեզ կրթող ,
պահող , մտաւոր պաշար ջամբող կրթական հաստատութիւնը ,
հոգեւորապէս ու բարոյապէս ու վերստին քեզ ծնող Տաճարը ,
մի՛ մի՛ մոռնար :

Ճշմարիտ , կատարեալ և ազնիւ նկարագրով , բարի կամ-
քով ու արի գորովով մի՛ մոռնար կրօնդ , ազօթքի մրմունջ-
ներդ առ բարձեալն Եկեղեցիդ . սէրը , յոյսը ունեցիր , ասոնք
քեզի ազնիւին , բարիին , սուրբին վրայ գաղափար պիտի տան .
ասոնցմով գաղափարուէ , զգածուէ ու զգացումով լցուէ .
պինդ կեցիր բարոյական վէմին վրայ ու շէնքդ ամբողջ այդ
հիմին կանգնեցուր , ու դուն պիտի լցուիս Ս . Հոգիով ու
շնորհիւ . հաւատքէն քեզի ամուր թեւեր շինէ , որ բարձրու-
թեանց վրայ թառիս ու թռիս առանց մնասուելու ու վտանգ-
ուելու . յուսա՛ միշտ այն պարգևներուն որոնք երկնատուր
ու ձրիատուր քու մէջ մարդ կատարեալը , արի զինուորը պիտի
ձեւակերտեն : Այո՛ յուսա թէ դուն քու բարի վարքովդ , և
օրինապահութիւնովդ ու անձանձիր աշխատութիւնովդ սոսկա-
կան զինուորութենէ պիտի բարձրանաս ու քու ցեղէդ քանի-
ներ մեծ ու շատ մեծ դիրքերու ու համբաւներու արժանա-
ցած են . դուն նոյն ցեղին արիւնը կը կրես , նոյն հաւատար-
մութեան , հնազանդութեան ու համբերութեան ոգին ունիս .
որչափ որ առջեւդ թումք կամ դժուարութիւններ յարուցուի ,
ճշմարտութիւնն է որ դարձեալ յաղթանակը պիտի տանի .
դուն աշխատիր ու միշտ . հոգ չէ թէ անյարկի նեղութիւն-
ներ ալ երբեմն դէմդ տնկուին կամ քեզ ընկձեն , «Եւ որ
համբերեսցէ իսպառ նա կեցցէ» : Հայ զինուոր . զինուորի ու
մարդու բոլոր պարագերով արժանաւոր մէկ նեղութիւն եղիր զին-
ուորականութեան . հայրենիքիդ , տանդ և Տէրութեանդ : Յար-
գէ՛ սիրէ՛ , պատուէ , պատկառի՛ր , հլու կեցիր պետիդ՝ ինչ
դիրքի ու աստիճանի ու ցեղի ալ պատկանի . գիտցիր թէ ա-
նիկա Օսմանցի է ու քեզի հրամայողն ու առաջնորդողն է , և
քեզի սովրեցնողը . առածը կ'ըսէ «Պիր էլիֆին սախի հազգը
վար» : Ուղիդ ճամբան ու խոհեմ մտածումը լաւ է ու այդ է
խոնարհութիւն , հեղութիւն , ու ասոնք ամէն խատութիւն ,
չարակամութիւն ու խտրականութիւն իսկ կը մեղմացնեն , կը
չէզոքացնեն : Պիտի խոստովանինք թէ կառավարութիւնն իր

ոյժը, իր գանձին մեծ մասը գինուորին ու զօրանոցին յատկացուցած է, ամէն տեղ շինութիւն, ամէն տեղ նորութիւններ ու հանգիստի համար կարգադրութիւններ: Ըսել է ընդունուած է թէ գինուորը մասնաւոր յարգանքի, համակրանքի, սիրոյ արժանի է, թէեւ չպիտի կրնանք ըսել որ բոլորովին վերջին կատարելութեան հասցուած է և մանաւանդ ամէն պետեր ըմբռնած են Հաւասարութեան, Արդարութեան ու ճշմարտութեան մեծ գաղափարը և կամ բոլորովին կարգ մը իրաւացի գանգաւաներու պատճառը վերցուած է: Բայց մասնաւոր պարագաներ, և երբեմն անտեղի դէպքեր չեն կրնար ընդհանուր կերպով գործածուած նորութիւններու ու դրութիւններու գովելի ընդունելութիւնը նսեմացնել. լաւ է որ պատասխանատու բարձր վարչութիւնը քիչ մը աւելի լայնախոհ, աւելի ազատ ու անկաշիհանդ մտածող ու գործող ըլլայ, և յարգուին իւրաքանչիւր տարրի զգացումները, աւանդութիւնները սովորութիւնները և ճշմարիտ արժանիքները որոնց վրայ խկտանուին, բարձրանան անխտորոէն և ցոյց արուած կիրթ վերաբերումներ աւելի ազդու ու ապաւորիչ կ'ըլլան. վստահ ենք թէ մին և թէ միւսը պիտի լրանան ու Հայ Օսմանցի գինուորն անգամ մը ևս ցոյց պիտի աայ իր սոհմային բարքն որ է՝ հաւատարմութիւն, պարկեշտութիւն, համեստութիւն, աշխատասիրութիւն:

Ս. Գիրքը կ'ըսէ թէ բարի ըլլալ չարժեք անչափ ու այնչափ, որչափ բարի ըլլալ ու բարիք գործելը. ըսել է մարդ իր նմանին սլ սովրեցնելու է ինչ որ ինք ունի, ուսումէն, կըրթութեանէն, ազնուութեանէն, պարկեշտութեանէն ու ասով երկիցս լաւութիւն ըրած կ'ըլլայ. թէեւ քիչ մը ուշ, բայց համբերատար ու յամառ հոգին կը հասնի նպատակին, ուրեմն բաժին հանեցէք անոնց, որոնք կը կարօտին: Հայ Օսմանցի գինուոր, վե՛ր բռնէ ճակատդ ու բաց, ու հող ազգիդ փոքրհութիւնը մի խարաներ, երկչոտութիւնով չըլլայ որ կրունկ դարձնես, քամակդ ցոյց տաս փոխան կուրծքի. սխալ է միշտ

սա ու նա պատճառանքներով փախուստ տալը • լալկանութիւնը
կանացի բնաւորութեան յատուկ է, թէեւ անոցմէ շատերէն
լսած ենք որ կը փափաքին իրենց տղաքը զինուոր ու սպայ
տեսնել հայրենիքի սւ տան պատուի ու պարծանքի պաշտպա-
նութեան ապահովութեանն համար: Ուրեմն գնա՛, գնա՛ Հայ
զինուոր սիրելով հայրենիքդ, յարգելով ու հնազանդելով պե-
տերուդ ու եղայրանալով անգամ մը ևս քեզի եղբայր եղող
միեւնոյն Օսմանցին:

ՎԵՐՁ



